ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Ազգային ժողովի աշխատակարգի 87-րդ կետով, հանձնաժողովը որոշում է.

1. 2020 թվականի փետրվարի 25-ին՝ ժամը 10:30-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում հրավիրել խորհրդարանական լսումներ, որի թեման է. ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-428-20.12.2019-ՊԻ-011/0) և հարակից օրենքների նախագծերի փաթեթի քննարկում»:

2. Հաստատել խորհրդարանական լսումների ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելված 1

«Խորհրդարանական լսումներ հրավիրելու մասին» ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի որոշման

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԹԵՄԱՆ	««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (Կ-428-20.12.2019-ՊԻ-011/0) և հարակից օրենքների նախագծերի փաթեթի քննարկում»
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ	ք. Երևան, Բաղրամյան 19, Ազգային ժողովի նիստերի դահլիճ
ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ	2020 թ. փետրվարի 25՝ ժամը 10:30
10:30-11:00	Մասնակիցների գրանցում
11:00 – 11:10	Բացման խոսք՝ հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Վարդանյան**
11:10 – 11:30	Օրենքի նախագծերի փաթեթի հիմնական դրույթների ներկայացում՝ Զեկուցող՝ Կառավարության ներկայացուցիչ
11:30 - 12:00	Հարցեր զեկուցողին (մինչև 3-ական րոպե)
12:00 – 12:30	Ընդմիջում
12:30 - 13:00	Զեկուցումներ
13:00 – 13:30	Հարցեր զեկուցողներին (մինչև 3-ական րոպե)
13:30 - 14:30	Ընդմիջում
14:30 - 16:00	Մտքերի փոխանակություն (ելույթներ մինչև 5-ական րոպե)
16:00 – 16:20	Եզրափակիչ ելույթ՝ Կառավարության ներկայացուցիչ
16:20 - 16:30	Ամփոփում՝ հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Վարդանյան**

Լսումները նախագահում է Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը:

Հարցերի և ելույթների համար հերթագրումն իրականացվում է հարց տվողի կամ ելույթ ունեցողի անունը, ազգանունը և կազմակերպության անվանումը հանձնաժողովի փորձագետներին տեղեկացնելով (հերթագրվելով): Հարցերին կարող են պատասխանել նաև հիմնական զեկուցողի հրավիրած անձինք: Սույն ընթացակարգով նախատեսված ժամկետները կարող են փոփոխվել լսումները վարողի կողմից: